

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ԿՈՍՏՎՈՅԻ ԳՈՐԾՈՎ ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՂԱՏԱՐԱՆԻ  
ԽՈՐՀՐԴՂԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Արտաշես ԽԱԼԱԹՅԱՆ**

*Երևանի պետական համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ  
[artashes.khalatyan@mail.ru](mailto:artashes.khalatyan@mail.ru)*

*Գիտական ղեկավար՝ ի.գ.թ., դոցենտ Վարդան Այվազյան*

Լեռնային Ղարաքաղի հակամարտության կարգավորման բանակցությունների առանցքային հիմնահարցը Լեռնային Ղարաքաղի (այսուհետ՝ ԼՂ) կարգավիճակն է, որը պետք է որոշվի ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հիման վրա: Այս առումով շատ փորձագետներ և քաղաքական գործիչներ նշում են, որ ԼՂ կարգավիճակի ամրագրման համար կարող է նախադեպ ծառայել Կոսովոյի հակամարտության հանգուցալուծման կառուցակարգը<sup>1</sup>: Եվ իրոք, Կոսովոյի կոնֆլիկտն իր սկզբնավորման և զարգացման պատմական և քաղաքական համատեքստով նման է ԼՂ կոնֆլիկտին, և, որ ամենակարևորն է, Կոսովոյի հիմնախնդրի լուծման գործում մեծ դեր է կատարել ՄԱԿ-ի միջազգային դատարանը, որը Կոսովոյի հակամարտությունը քաղաքական-բանակցային հարթությունից տեղափոխել է իրավական տիրույթ: Վերջինս, շնորհիվ ֆորմալ իրավական կանոնների, միջազգային վեճի լուծման շատ ավելի որոշակի և կանխատեսելի եղանակ է: Կոսովոյի կարգավիճակի հիմնախնդրի հանգուցալուծման կառուցակարգն արժեքավոր է հենց միջազգային-դատական վերահսկողության տարրի առկայությամբ: Ավելին՝ 2010թ. հունիսի 22-ին ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից իրապարակված խորհրդատվական եզրակացությունը, որով իրավաչափ ճանաչվեց 2008թ. փետրվարի 17-ին Կոսովոյի անկախության հռչակումը, թերևս 1-ին անգամ արժեքավոր իրավական մեկնաբանություն է տվել ազգերի ինքնորոշման սկզբունքին հետզադուրափական շրջարկում և սահմանել հստակ իրավական չափորոշիչներ, որոնք թույլ են տալիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական գնահատական տալ իր ինքնորոշման համար պայքարող ազգային հանրույթի կողմից անկախության հռչակման և սեցեսիայի ակտին: Այս հանգամանքը Կոսովոն դարձնում է խիստ կարևոր նախադեպ հայկական կողմի համար թե՛ բանակցային գործընթացում և թե՛ ԼՂ միջազգային-իրավական ճանաչման համատեքստում:

<sup>1</sup> Տե՛ս 2008թ. ԵԱՀԿ-ի ավագ խորհրդատու Դ. Լինչի ելույթը Բաքվում՝ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեճաժողովի միջազգային սեմինարում, <https://armenpress.am/arm/news/140135/eahk-i-nerkayacucichy-kosovon-nakhadep-e-hamarum-----.html>, Զ. Նիքսի, Կոսովոն նախադեպ է Ղարաքաղյան խնդրի լուծման համար, Ստեփանակերտ, 2012թ., <http://www.artsakhtert.com/arm/politics/item/2300> և այլն:

Կոսովոյի գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության նորմատիվ էությունը կառուցված է երկու փոխկապակցված հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի դատարանի արտահայտած դիրքորոշման վրա. 1. իրավաչափ է արդյոք ազգային հանրույթի կողմից «մայր» պետությունից իր անկախության միակողմանի հռչակումը *per se*, 2. ի՞նչ չափանիշների պետք է համապատասխանի ազգային հանրույթի անկախության կամ արտաքին ինքնորոշման (*external self-determination*) ակտը, որպեսզի միջազգային իրավունքի տեսանկյունից ճանաչվի լեգիտիմ: Ըստ ՄԱԿ-ի միջազգային դատարանի՝ ինքնորոշվող ժողովրդի կամ ազգի կողմից իր անկախության միակողմանի հռչակումն ինքնին չի խախտում միջազգային իրավունքը, քանի որ միջազգային իրավակարգը չի պարունակում նման գործողության արգելք<sup>1</sup>: Փաստորեն այս դեպքում ՄԱԿ-ի դատարանը կիրառել է միջազգային իրավունքի հայտնի «Լոտուսի կանխավարկածը», որը հանգում է ներպետական իրավունքին բնորոշ «այն ինչ արգելված չէ, թույլատրելի է» կանխադրույթին<sup>2</sup>: Սրանից կարելի է հանգել հետևություն, որ «մայր» պետությունը չի կարող դելիգիտիմացնել իր ինքնորոշման իրավունքն իրացնող և «մայր» պետության տարածքային ամբողջականությունից անջատվող ազգային հանրույթի կողմից անկախության հռչակման ակտը և ուժ կիրառել այդ հանրույթի նկատմամբ, ինչպես որ արեցին Սերբիան Կոսովոյի նկատմամբ և Ադրբեջանը՝ սանձազերծելով հայերի էթնիկ գտումներ Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և ադրբեջանական այլ տարածքներում ու ռազմական ագրեսիա սկսելով բուն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշվող ժողովրդի նկատմամբ:

Բացի այդ, ՄԱԿ-ի դատարանն իր խորհրդատվական եզրակացության 80-րդ կետում անդրադարձել է պետությունների տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքների հարաբերակցությանը՝ նշելով, որ տարածքային ամբողջականության սկզբունքի գործողությունը տարածվում է պետությունների միջև հարաբերությունների վրա<sup>3</sup>: Այդպիսով, ՄԱԿ-ի դատարանը չէտարկել է ինքնորոշվող ազգային հանրույթի սեցեսիոն գործողությունների վիճարկման մյուս հիմքը՝ ազգերի ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության ենթադրյալ հակասության ու տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայության թեզը՝ փաստելով ազգերի ինքնորոշման սկզբունքի ինքնաբավ բնույթը: Մեր կարծիքով, ըստ ՄԱԿ-ի դատական ատյանի տրամաբանության, տարածքային ամբողջականության սկզբունքը հանգում է ընդամենը պետությունների կողմից միմյանց նկատմամբ ագրեսիա չկիրառելու միջազ-

<sup>1</sup> St'u Advisory Opinion on the Accordance with International Law of Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, p.32, para 84 (I.C.J. 2010).

<sup>2</sup> St'u Burri, Thomas. The Kosovo Opinion and Secession: The Sounds of Silence and Missing Links *German L aw Journal*. 11(2010):881-890.

<sup>3</sup> St'u Advisory opinion, p. 30, para 80

գային - իրավական պարտավորությանը<sup>1</sup>: Նման մոտեցումը երևան է հանում ՄԱԿ-ի դատարանի ներքին կողմնորոշումը դեպի հետգաղութատիրական մեկնաբանմամբ ինքնորոշման իրավունքի սկզբունքի լեգիտիմացիա: Այս փաստն առանցքային կարևորություն ունի, քանզի ՄԱԿ-ի դատարանը միջազգային իրավունքի ձևավորմանը նպաստող հիմնական սուբյեկտներից մեկն է:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունում հանգամանալից անդրադարձ կա նաև այն հարցին, թե a priori, որպես միջազգային- իրավական երևույթ իրավաչափ հանդիսացող անկախության միակողմանի հռչակումը ձևական ինչ չափանիշների պետք է համապատասխանի, որպեսզի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հնարավոր լինի որոշել՝ լեգիտիմ է արդյոք անկախության (անջատման) տվյալ ակտը, թե ոչ: Վերլուծելով խորհրդատվական եզրակացությունում տեղ գտած իրավական դատողությունները՝ կարելի է Դատարանի դիրքորոշումն այս հարցում բանաձևել հետևյալ կերպ. անկախության միակողմանի հռչակումն իրավաչափ է, եթե այն իրականացվել է ողջ ինքնորոշվող ժողովրդին ներկայացնող կազմակերպության կողմից, և անկախության հռչակումը կապված չէ միջազգային իրավունքի բացարձակ խախտման հետ<sup>2</sup> : Ըստ այդմ, որպես ինքնորոշման համար պայքարող ժողովրդի շահերը ներկայացնող մարմին պետք է հանդես գա որոշակի կազմակերպական կառուցվածք ունեցող ազգային ազատագրական շարժում կամ ներկայացուցչական այլ մարմին<sup>3</sup>:

Կոսովոյի անկախությունը հռչակվել է ներկայացուցչականության բարձր մակարդակ ունեցող մարմնի՝ Կոսովոյի խորհրդարանի կողմից, որը, սակայն, ձևավորվել էր ՄԱԿ-ի անցումային վարչակազմի հսկողությանմբ և ինստիտուցիոնալ աջակցությամբ, որպիսի հանգամանքը, բնականաբար, թուլացնում էր Կոսովոյի պառլամենտի լեգիտիմության աստիճանը: Մինչդեռ, ԼՂ անկախության հռչակման ակտը նույնիսկ գերազանցել է ՄԱԿ-ի դատարանի սահմանած ժողովրդավարական լեգիտիմացիայի նվազագույն շեմը, քանզի 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂ անկախությունը

---

<sup>1</sup> Պատահական չէ, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը, իր դիրքորոշումը հիմնավորելու համար, հղում է անում ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածին և Յելսինկյան եզրափակիչ ակտի 4-րդ հոդվածին, որոնց համաձայն՝ արգելվում է անիրավաչափ ուժի կիրառումը կամ դրա սպառնալիքը պետությունների (ընդգծումս իմն է) տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության նկատմամբ; (St' u Advisory opinion, at 30) Ավելին՝ տարածքային ամբողջականության՝ որպես միջպետական հարաբերություններում կիրառվող սկզբունքի կարգավիճակի վերաբերյալ իրավադրույթներ պարունակող միջազգային համաձայնագրերն իրականում ավելի մեծ թիվ են կազմում St' u Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև քարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիր և այլն:

<sup>2</sup> St' u Advisory opinion p.20, para52, p.30- 31, para 81 and 36-39, para 102-109

<sup>3</sup> St' u Cassese A. *Self-Determination of Peoples*. Cambridge: University Press,1995, pp.165-166

հռչակվել է ԼՂ բնակչության ուղղակի կամարտահայտմամբ՝ պլեբիսցիտի կամ հանրաքվեի միջոցով, ինչը հանդիսանում է ժողովրդավարության բարձրագույն դրսևորում: Սրա հետ մեկտեղ, ՄԱԿ-ի միջազգային դատարանն ընդգծել է, որ անկախության միակողմանի հռչակման իրավաչափությունը պայմանավորված է նաև նրանով, թե արդյոք անկախության միակողմանի հռչակումը հետևանք է կամ այլ կերպ կապված է ուժի անիրավաչափ կիրառման կամ միջազգային իրավունքի այլ հիմնարար սկզբունքների խախտման հետ՝ *jus cogens* նորմերի և այլն<sup>1</sup>: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ եթե Կոսովոյի դեպքում երբեմն հնչում են պնդումներ, որ այդ երկրամասի իշխանությունն սկզբնապես կազմակերպել է բռնություններ և նույնիսկ եթնիկ գտումներ շրջանի ազգային փոքրամասնությունների և հատակապես սերբերի նկատմամբ<sup>2</sup>, ապա ԼՂ պարագայում ակնհայտ է թե՛ Ղարաբաղյան շարժման խաղաղ և իրավաչափ բնույթը և թե՛ հետագայում սանձազերծված ռազմական գործողություններում ԼՂ ժողովրդի՝ ինքապաշտպանվողի կարգավիճակը: Այսպիսով, չնայած որոշ առումով զգուշավոր կեցվածքին և ազգերի ինքնորոշման սկզբունքի ներքին իմաստի և կիրառման հիմնախնդրի ոչ ամբողջական բացահայտմանը, ՄԱԿ-ի միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունը մեծ նշանակություն ունի ազգերի ինքնորոշման իրավունքի հետզադուրթատիրական մեկնաբանման և դրա կիրառման իրավական հիմքերի մշակման գործում: Այն, հիրավի, «դուռ է բացում» ազգային ազատագրական շարժումների և ազգերի համար՝ հասնելու իրենց ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման: Խոսքը հատկապես վերաբերում է ԼՂ-ին:

Ինչպես ցույց տվեց հոդվածի շարադրանքը, ԼՂ լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից մշակված իրավական չափանիշներին և կանխադրույթներին, ուստի ունի բոլոր անհրաժեշտ իրավաբանական և փաստական հիմքերն իր կողմից հռչակված անկախության միջազգային իրավական ճանաչման հասնելու համար: Յետևաբար ՄԱԿ-ի միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունը կարող է ուժեղ հաղթաթուղթ դառնալ հայկական կողմի համար: Այս առումով անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ ակտիվ դիվանագիտական գործընթաց սկսի ՄԱԿ-ում, Եվրոպայի խորհրդում, ԵԱՀԿ-ում և միջազգային այլ կազմակերպություններում ԼՂ ինքնորոշման իրավունքի ճանաչման և հարգման վերաբերյալ բանաձևերի և այլ փաստաթղթերի ընդունմանը հասնելու համար՝ այդ թվում հղում կատարելով Կոսովոյի գործով ՄԱԿ-ի

<sup>1</sup> Տե՛ս Advisory Opinion, at 30-31, para 81.

<sup>2</sup> Տե՛ս Bolgari A Comparative Analysis of the Secessions of Kosovo and South Ossetia and Their Subsequent Independence Recognition, Kent State University, 2011, p.53, Թորոյան Ս. Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, Երևան, 2007, էջ 9,12,14

միջազգային դատարանի վերը վերլուծված դատական ակտի վրա: Հարկավոր է նաև ակտիվացնել միջպետական բանակցությունները հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների հետ ԼՂ անկախ կարգավիճակի միջազգային ճանաչման շուրջ՝ հաշվի առնելով նաև Կոստովոյի նախադեպը: Վերջինս կարող է հաջողությամբ օգտագործվել հայկական կողմի կողմից նաև ԼՂ միջազգային ճանաչման շուրջ օտարերկրյա պետությունների հետ բանակցություններում: Բացի այդ, դարաբաղա-ադրբեջանական բանակցությունների ամպախման դեպքում Կոստովոյի գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունը կարող է նախադեպային իրավական հիմք դառնալ հայկական կողմի համար ՄԱԿ-ի դատարանում և միջազգային դատական այլ ատյաններում ԼՂ ինքնորոշման իրավունքի ճանաչման նպատակով միջազգային դատական գործընթաց հարուցելու դեպքում:

### ***Արտաշես Խալաթյան***

#### **ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿՈՍՏՎՈՅԻ ԳՈՐԾՈՎ ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՂԱՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Բանալի բառեր՝** *ազգերի ինքնորոշման իրավունք, Լեռնային Ղարաբաղ, Կոստովո, ՄԱԿ-ի միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացություն, նախադեպ*

Հոդվածը նվիրված է Կոստովոյի գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության և ԼՂ կարգավիճակի հիմնախնդրին դրա վերաբերելիության քննական վերլուծությանը: Հոդվածում, մասնավորապես, ներկայացված են ՄԱԿ-ի դատարանի կողմից մշակված՝ ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման իրավաչափության պայմանները, և հիմնավորված է այդ պայմաններին ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի համապատասխանությունը: Հոդվածը եզրափակվում է որոշակի առաջարկներով հայկական կողմի կողմից Կոստովոյի գործով ՄԱԿ-ի դատարանի խորհրդատվական եզրակացությունը՝ որպես իրավական նախադեպ օգտագործելու վերաբերյալ:

*Арташес Халатян*

**ПРАВО НАРОДА НАГОРНОГО КАРАБАХА НА  
САМООПРЕДЕЛЕНИЕ В КОНТЕКСТЕ КОНСУЛЬТАТИВНОГО  
ЗАКЛЮЧЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО СУДА ООН ПО ДЕЛУ  
КОСОВА**

**Ключевые слова:** *право наций на самоопределение, Нагорный Карабах, Косово, консультативное заключение Международного суда ООН, прецедент*

Статья посвящена критическому анализу консультативного заключения Международного суда ООН по делу Косова и его относимости к проблеме статуса НК. В частности, в статье представлены критерии правомерности реализации права наций на самоопределение и обосновывается соответствие права народа НК на самоопределение этим критериям. В заключительной части статьи сделаны определенные предложения относительно использования консультативного заключения суда ООН армянской стороной в качестве правового прецедента.

*Artashes Khalatyan*

**THE RIGHT OF NAGORNO KARABAKH PEOPLE TO  
SELF- DETERMINATION IN THE CONTEXT OF ICJ ADVISORY  
OPINION ON KOSOVO CASE**

**Key words:** *right of nations to self- determination, Nagorno Karabakh, Kosovo, ICJ advisory opinion, precedent*

The article is devoted to critical examination of the ICJ advisory opinion on Kosovo case and its pertinence to the issue of status of NK. Particularly, the criteria of legality of realization of the right to self-determination elaborated by the UN Court are elucidated and correspondence of the NK people's respective right to these criteria is substantiated. In the conclusion several suggestions are made concerning the use of the ICJ advisory opinion as legal precedent by the Armenian side.